ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/95

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Աստիճան» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Գ. Գաբրիելյանի,
«Աստիճան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,
«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցում, բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Աստիճան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 01.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 01.09.2020թ.-ին: 02.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/88 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/88 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/95 համարի ծածկագիրը:

10.09.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.09.2020թ.-ին, 02.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. «Աստիճան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աստիճան» ՍՊԸ-ն 01.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի առարկան է հանդիսանում՝ բազմաբնակարան շենքերի էներգաարդյունա¬վետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը:

Ընթացակարգի 2.3.1.1. կետի համաձայն՝ "Մասնագիտական փորձառություն" որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա/մասնակիցը հայտով պետք է ներկայացնի՝

- *պետական գրանցման վկայականի պատճենը,*
- *բնակելի, հասարակական և արտադրական շինարարության որակի տեխնի¬կական հսկողության իրականացման պետական լիցենզիայի և ներդիրի պատճենները,*
- *վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ՝ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ,հանձնման-ընդունման արձանագրություններ,երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/*
- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրություն,*

բ/ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 14.08.2020թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության (հրապարակվել է www.gnumner.am կայքում 28.08.2020թ.) 3-րդ կետով արձանագրվել է հետևյալը.

1. .....Ա/Ձ Վահրամ Կնյազյանի հայտում բացակայել են հրավերի 2.3.1-ի կետով պահանջվող՝

- *Աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*

- *Առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ ռեզյումեները:*

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները՝ ներկայացնելով բացակայող փաստաթղթերը:

Այնուհետև, առաջին շտկումը կատարելուց հետո, նույն արձանագրության 4-րդ կետով գնահատող հանձնաժողովը այս անգամ էլ կայացրել է հետևյալ որոշումը. Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած պայմանագրերը չեն որակվում որպես բնույթով նմանատիպ, քանի որ շենք-շինությունների էներգաարդյունավետությունն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն եղել: Մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացրեց իր պայմանագրերը որպես բնույթով նմանատիպ սահմանելու փաստարկները՝ ներկայացնելով պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ընթացքը լուսաբանող լուսանկարներ, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքները: Գնահատող հանձնաժողովը ներկայացրած բոլոր հայտերում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը բավարար է գնահատել:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում 28.08.2020թ. «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, որի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Վահրամ Կնյազյանը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համա¬պատաս¬խանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 2.3.1.1. կետի համաձայն՝ “Մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա/մասնակիցը հայտով պետք է ներկայացնի՝

- *պետական գրանցման վկայականի պատճենը,*
- *բնակելի, հասարակական և արտադրական շինարարության որակի տեխնի¬կական հսկողության իրականացման պետական լիցենզիայի և ներդիրի պատճենները,*
- *վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ՝ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ,հանձնման-ընդունման արձանագրություններ,երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/*
- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրություն,*

բ/ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներ, մասնավորապես.

1. Նախ, ինչպես արդեն հայտնել ենք, տվյալ Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 14.08.2020թ., մինչդեռ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը կազմված է 27.08.2020թ.: Սակայն “Գնումների մասին” ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը իմպերատիվ սահմանում է, որ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում, իսկ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Ավելին, հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Մինչդեռ հայտերի բացման նիստի արձանագրությունը թվագրված է 27.08.2020թ., հրապարակվել է 28.08.2020թ., այնինչ հայտերի բացումը և համապատասխանաբար հայտերի բացման նիստը Օրենքի պահանջների համաձայն՝ պետք է թվագրված լիներ նույն օրը, այն է՝ 14.08.2020թ., և հրապարակվեր www.gnumner.am կայքում 15.08.2020թ.: Արդյունքում խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերի պահանջները:

2. ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է հետևյալը.

1. ...Ա/Ձ Վահրամ Կնյազյանի հայտում բացակայել են հրավերի 2.3.1-ի կետով պահանջվող՝

- *Աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*
- *Առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ ռեզյումեները:*

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները՝ ներկայացնելով բացակայող փաստաթղթերը:

Այնուհետև, առաջին շտկումը կատարելուց հետո, նույն արձանագրության 4-րդ կետով գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Վահրամ Կնյազյանին ևս մեկ անգամ տվել է հնարավորություն կատարել նոր շտկում հայտում առկա փաստաթղթերի մասով: Մասնավորապես, գնահատող հանձնաժողովը այս անգամ էլ կայացրել է հետևյալ որոշումը. Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած պայմանագրերը չեն որակվում որպես բնույթով նմանատիպ, քանի որ շենք-շինությունների էներգաարդյունավետությունն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման

պայմանագրեր չեն եղել: Մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացրեց իր պայմանագրերը որպես բնույթով նմանատիպ սահմանելու փաստարկները՝ ներկայացնելով պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ընթացքը լուսաբանող լուսանկարներ, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքները: Գնահատող հանձնաժողովը ներկայացրած բոլոր հայտերում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը բավարար է գնահատել:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. թիվ 2 արձանագրությունը, ակնհայտ է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կրկնակի անգամ կիրառել է Կարգի 41-րդ կետը և Ա/Ձ-ին տվել շտկելու հնարավորություն, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ:

3. Եվ վերջապես, ամենակարևորը.

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած պայմանագրերը չեն որակվում որպես բնույթով նմանատիպ, քանի որ շենք-շինությունների էներգաարդյունավետությունն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն եղել:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանարգել է, որ մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացրեց իր պայմանագրերը որպես բնույթով նմանատիպ սահմանելու փաստարկները՝ ներկայացնելով պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ընթացքը լուսաբանող լուսանկարներ, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքները: Գնահատող հանձնաժողովը ներկայացրած բոլոր հայտերում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապա¬տասխա¬նությունը բավարար է գնահատել:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ ներկայացրած պայմանագրերը որակել որպես բնույթով նմանատիպ, այսինքն Հրավերով սահմանված շենք-շինությունների էներգաարդյունավետությունն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագիր՝ հիմքում դնելով բացառապես ներկայացված ինչ-որ լուսանկարներ, քանի որ այդ վերացական լուսանկարները նախ, իրավական տեսանկյունից չեն կարող նույնականացվել ներկայացված պայմանագրի հետ, և երկրորդ չեն կարող բավարար իրավական հիմք

հանդիսանալ ներկայացված պայմանագիրը որպես հրավերով պահանջված շենք-շինությունների էներգաարդյունավետությունն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագիր համարվելու համար:

Նման պայմաններում գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Վահրամ Կնյազյանի հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ, խախտելով գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, "Գնումների մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41 և 42 կետերի պահանջները:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

3. <u>Քաջարանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.09.2020թ.-ին թիվ ԲՔԱ-ԳՆ/2/13275-2020 գրությամբ դիմել է Քաջարանի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «Աստիճան» ՍՊԸ-ի կողմից 01.09.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 03.09.2020թ.-ին թիվ 590 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Քաջարանի համայնքապետարանի կողմից բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07/08/2020թ-ին հայտարարվել է N ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02 ծածկագրով գնման ընթացակարգ: Հրավերով սահմանվել է, որ

1. մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա/ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի

- *պետական գրանցման վկայականի պատճենը,*
- *բնակելի, հասարակական և արտադրական շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման պետական լիցենզիայի և ներդիրի պատճենները,*
- *վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ՝ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր / հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/*
- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրություն,*

բ/ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

2. «Աշխատանքային /ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա/ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի

- *տեղեկություններ առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (ռեզյումեներ), առնվազն երկու հոգի,*

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմավել 14/08/2020թ. 16: 00-ն: Ընթացակարգին հայտ է ներկայացրել 3 մասնակից: Հայտերը բացվելուց հետո հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգից բեռնել է յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի փաթեթը և փոխանցել գնահատող հանձնաժողովի անդամներին:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվի առնելով վերոնշյալ կետը հանձնաժողովն սկսել է յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի գնահատումը՝ գնահատելով

ա/մասնակցի ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

բ/ ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանությունը:

Հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության գնահատման ընթացքում արձանագրել է, որ՝

1. «Աստիճան» ՍՊ ընկերության հայտում բացակայել է՝

- *հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարելու նպատակով. պահանջվող պետական գրանցման վկայականի պատճենը*

2. «Հալդի Քոնսալթ» ՍՊ ընկերության հայտում բացակայել է՝

ա/ հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող՝

- *պետական գրանցման վկայականի պատճենը,*
- *բնակելի, հասարակական և արտադրական շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման պետական լիցենզիայի և ներդիրի պատճենները,*
- *վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/*
- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*

բ/ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և

տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները

3. Ա/Ձ Վահրամ Կնյազյանի հայտում բացակայել է՝

ա/ հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող՝

- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*

բ/ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝

- *առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները (ռեզյումեներ)*

Շարունակելով մասնակիցների ներկայացրած հայտում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը հանձնաժողովը որոշել է՝ Ա/Ձ Վահրամ Կնյազյանի կոմից ներկայացված հայտում առկա «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող ներկայացված պայմանագրերը չեն որակվում բնույթով նմանատիպ, քանի որ դրանք շենք-շինությունների էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն:

Հանձնաժողովը որպես գնահատման առարկա չի դիտարկել «Աստիճան» ՍՊ ընկերության հայտում առկա «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող Հայաստանի վերականգնվող էներգետկիկայի և էներգախնայողության հիմնադրամի և «Աստիճան» ՍՊ ընկերության հետ ընթացակարգին կոնսորցիումով հանդես եկող «Հուսալի Կամար» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագիրը, քանի որ տվյալ այն կնքվել էր 17/07/2015-թ-ին, ծառայությունների մատուցումն ավարտվել է 17/11/2016թ-ին, հետևաբար տվյալ պայմանագիրը դուրս է հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված ժամկետներից:

Հանձնաժողովը, ամբողջացնելով գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները, Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույնը օրը՝ 25/08/2020թ-ին արմեպս համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ ծանուցման մեջ մանրամասն նկարագրելով արձանագրված անհամապատասխանությունները:

27/08/2020թ-ին հանձնաժողովը շարունակել է հայտերի բացման և գնահատման նիստը:

Քարտուղարը հանձնաժողովի անդամներին է տրամադրել սահմանված ժամկետում մասնակիցների կողմից նեկայացված շտկումները: Ընդ որում՝

1. «Աստիճան» ՍՊ ընկերությունը ներկայացրել է

- *հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարելու նպատակով պահանջվող պետական գրանցման վկայականի պատճենը*

2. «Հալդի Քոնսալթ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է

ա/հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող՝

- *պետական գրանցման վկայականի պատճենը,*
- *բնակելի, հասարակական և արտադրական շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման պետական լիցենզիայի և ներդիրի պատճենները,*
- *վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ՝ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր / հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/*
- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*

բ/ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող

- *առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները (ռեզյումեներ)*

3. Ա/Ձ Վահրամ Կնյազյանը ներկայացրել է

ա/ հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող՝

- *աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը*

բ/ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող

- *առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները (ռեզյումեներ)*

Գնահատելով առկա փաստաթղթերը և ներկայացված շտկումները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը գնահատել բավարար:

Ա/Ձ Վահրամ Կնյազյանը հանձնաժողովի՝ Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած պայմանագրերը որպես բնույթով նմանատիպ չորակելու որոշմանն ի պատասխան՝ հանձնաժողովի քարտուղարին տրամադրել է նշված պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքներ, ընթացքը լուսաբանող լուսանկարներ և մատնանշել այն հանգամանքը, որ N ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.3.1.1 .կետում հստակեցված չէ, որ բնույթով նմանատիպ աշխատանքներ եզրույթը միայն շենք-շինությունների էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններն է ընգրկում:

Հանձնաժողովը, ընդունելով Ա/Ձ Վահրամ Կնյազյանի փաստարկները և հաշվի առնելով, որ մասնակիցը ունի պահանջվող լիցենզիաները, որոշեց Ա/Ձ Վահրամ Կնյազյանի, ինչպես նաև «Աստիճան» ՍՊԸ-ի և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատել բավարար.

Այսպիսով, հայտերի բացման և գնահատման նիստում, հանձնաժողովի որոշմամբ յուրաքանչյուր չափաբաժնի համար ոչ գնային և գնային պայմաններով բավարար գնահատված մասնակիցներից հայտարարվել են ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները, ինչի արդյունքում N 1 և 2 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Վահրամ Կնյազյանը:

Հայտնում ենք Ձեզ, որ հանձնաժողովի քարտուղարը 27/08/2020թ-ով թվագրված Արձանագրություն N 2-ում արձանագրել և ներկայացրել է 14/08/2020թ-ից 27/08/2020թ-ը ընկած ժամանկահատվածում անձնաժողովի իրականացրած բոլոր քայլերը և գնահատման ընթացքը և ՀՀ կառավարության 526-Ն որոշման 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը՝ 28/07/2020թ-ին հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել է տեղեկագրում:

Քաջարանի համայնքապետարանը իր կարիքների համար գնման ընթացակարգը կազմակերպելիս բացառապես հիմնվել և հիմնվում է ՀՀ գործող օրենքների և իրավական նորմերի վրա, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշման վրա:

Քաջարանի համայնքապետարանը իր կարիքների համար կազմակերպված գնման գործընթացները կազմակերպել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքների շրջանակում, այն է՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Անդրադառնալով բողոքի իրավական հիմքերին և հիմնավորումներին՝ գտնում ենք որ Քաջարանի համայնքապետարանի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի շրջարանկներում որևէ կերպ չեն խախտվել Բողոքաբերի վկայակոչված հոդվածները: Գտնում ենք, որ Բողոքաբերը իր բողոքում հիշատակելով օրենքի հոդվածները, որևէ կերպ չի հիմնավորել, թե հատկապես որ գործողության արդյունքում են խախտվել նշված հոդվածները: Մնացած փաստական հանգամանքների դեմ նույնպես առարկում ենք, առարկայազուրկ լինելու հիմքով:

Բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ Բողոքաբերը ստեղծել է թյուրընկալում՝ մատնանշելով, այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ՀՀ օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներ: Մասնավորեցնենք.

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Ընթացակարգի հայտերը բացվել են 14/07/2020թ-ին, գնահատման նիստն ավարտվել է 27/08/2020թ-ին և Արձանագրություն N 02-ը թվագրված է հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրով:

Նույն Որոշման 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

28/08/2020թ-ին հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ արձանագրությունը հրապարակել է տեղեկագրում՝չխախտելով որևէ ժամկետ:

2. Որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի, պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով 25/08/2020թ-ին մեկ աշխատանքային օրով մեկ անգամ կասեցրել է նիստը և նույն օրը քարտուղարը ծանուցել է մասնակիցներին:

Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

27/08/2020թ-ին հանձնաժողովը շարունակել է հայտերի բացման և գնահատման նիստը:

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով և գնահատելով մասնակիցների ներկայացրած շտկումները և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտ ներկայացրած բոլոր երեք մասնակիցների կողմից ներկայացված պայմանագրերը նույնաբնույթ են և վերաբերում են շենք-շինությունների կառուցման կամ հիմնանորոգման շինարարական աշխատանքների, որոնցում ներառված են նաև շենքերի ջերմամեկուսացման և էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքերը, որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցմանը, որոշեց «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի, «Աստիճան» ՍՊԸ-ի և Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած հայտի ոչ գնային պայմանները գնահատել բավարար, և ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Հայտերի բացման և գնահատման նիստի 27/08/2020թ-ի թիվ 2 Արձանագրության մեջ՝

1-ին կետով արձանագրվել է հայտերի բացման ամսաթիվը

2-րդ կետով՝ հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և նրանց ռեկվիզիտները

3-րդ կետով՝ ներկայացված հայտերում պահանջվող բոլոր փաստաթղթերի առկայության փաստը, ինչպես նաև այդ մասով արձանագրված թերությունները, դրանց շտկումը և գնահատումը

4-րդ կետով արձանագրվել են՝ առկա փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխան լինելու փաստը, գրանցում արձանագրված անհամապատասխանությունների և դրանց շտկման փաստը և գնահատումը:

5-րդ կետով արձանագրվել են նախահաշվային գները, մասնակիցների գնային առաջարկները և ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

Անդրադառնալով Բողոքաբերի այն դիտարկմանը, թե մասնակցին կրկնակի է ուղարկվել շտկման մասին ծանուցումը, հայտնում ենք, որ անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցումը մասնակիցներին ուղարկվել է միայն մեկ անգամ, և այդ փաստը հավաստում են սույն դիրքորոշմանը կցվող ծանուցման արտատպված տարբերակները:

3. Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված N ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.21 կետով ամրագրված է՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Իսկ հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրա՛վասու մարմինների գրավոր եզրակացությունը:

Հարկ է նշել, որ գնահատող հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ի սկզբանե վստահում է յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տեղեկությունների արժանահավատ լինելուն, քանի դեռ դրանց իսկությունը կասկածի տակ դնող փաստեր և հանգամանքներ ի հայտ չեն եկել: Այս առումով՝ հանձնաժողովը Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած լուսանկարները որակել է իրականությանը համապատասխանող և վերանայել է իր որոշումը:

Ավելացնենք նաև, որ «Աստիճան» ՍՊԸ-ն վերոնշյալ ընթացակարգի շրջանակում Քաջարանի համայնքապետարանին չի ներկայացրել որևէ փաստաթուղթ իրեն տրամադրելու պահանջ, ծանոթ չէ Ա/Ձ Վահրամ Կնյազյանի ներկայացրած շտկումներին՝

ներառյալ լուսանկարներին, չի ստուգել դրանց իսկությունը, սակայն դրանք որակել է որպես իրավական տեսանկյունից ներկայացված պայմանագրերին չնույնականացվող:

Այսպիսով, պնդում ենք, որ Աստիճան ՍՊԸ-ի բողոքը չունի իրավական հիմք, և գնահատող հանձնաժողովի որոշումները չեն հակասում օրենքներին և իրավունքին:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Երրորդ անձը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված «ՔՀԳՀ1սԾՁԲ-20/02» ծածկագրով՝ շենքերի էներգաարդյունավետությանբարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների մրցույթի ընթացակարգում, պահանջվում է նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների պայմանագրեր, էներգաարդյունավետության բարձրացման համար:

Մեր ընկերության կողմից ներկայացվել է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների երկու պայմանագիր, որոնք ներառում են նմանատիպ էներգաարդյունավետության բարձրացման համար ուղղված աշխատանքների տեխնիկական հսկողություն: Այդ էներգաարդյունավետության բարձրացման համար ուղղված աշխատանքները իրենց մեջ ներառել են տանիքի ծածկի խարամի շերտի իրականացում ապահովելով ջերմամեկուսացում, առաստաղների և պատերի ջերմամեկուսացման աշխատանքներ հանքաբամբակխտերմոպլեքսի, ջերմամեկուսացնող և էներգաարդյունավետությունը բարձրացնող այլ նյութերի միջոցով, մուտքերի դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ, ֆասադային սվաղման և հարդարման աշխատանքներ, որոնք նույնպես կատարվել են ջերմամեկուսացնող և էներգաարդյունավետությունը բարձրացնող նյութերի միջոցով:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Քաջարանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.08.2020թ.-ին հայտարարվել է «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Աստիճան» ՍՊԸ-ն և «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.08.2020թ.-ի թիվ 02 արձանագրության համաձայն՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես՝ վերջինիս հայտում բացակայել է հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը, ինչպես նաև «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները (ռեզյումեները):

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է, որ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող ներկայացված պայմանագրերը չեն որակվում բնույթով նմանատիպ, քանի որ դրանք շենք-շինությունների էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն:

v. Հանձնաժողովի կողմից armeps.am համակարգի միջոցով 25.08.2020թ.-ին Մասնակցին ուղարկված ծանուցման համաձայն՝

«Հարգելի մասնակից, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը Ձեր ներկայացրած հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

1/ հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.11 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարելու համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի վերջին երեք տարիների ընթացքում բնույթով նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի մասին տեղեկություններ՝ պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր / հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/: Սակայն Ձեր ներկայացրած հայտում կցված պայմանագրերը չեն որակվում որպես բնույթով նմանատիպ, քանի որ դրանք շենք-շինությունների էներգաարդյունավետությանն ուղղված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն:

2/ Ձեր հայտում բացակայել են՝ • աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը • առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ ռեզյումեները:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և առաջարկում է Ձեզ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:»:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին 26.08.2020թ.-ին ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման հիման վրա, վերջինս սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում՝ 26.08.2020թ.-ին էլ. փոստի միջոցով ներկայացրել է պահանջված փաստաթղթերը, ինչպես նաև տրամադրել է նշված պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ընթացքը լուսաբանող լուսանկարներ, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքներ:

vii. Մասնակցի ներկայացրած հայտը գնահատվել է հրավերի պահանջներին բավարար: «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

viii. www.gnumner.am համացանցային կայքում 28.08.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Աստիճան» ՍՊԸ-ի

կողմից 01.09.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Քաջարանի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.08.2020թ.-ին հայտարարված «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի՝ «գնում կատարելու ընթացակարգերը և դրանց կիրառման պայմանները» վերտառությամբ 3-րդ բաժնի՝ 22-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

2. Պետական գաղտնիք պարունակող գնումները գնանշման հարցման ձևով իրականացվելու դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել պատվիրատուից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները:

3. Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման,

իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

Օրենքի նույն բաժնի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Նախաորակավորման ընթացակարգ կազմակերպելու դեպքում՝

1) այդ մասին հրապարակվում է նախաորակավորման հայտարարություն.

2) խորհրդատվական ծառայության, երկու փուլով մրցույթի կամ փակ նպատակային մրցույթի կիրառման դեպքում նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն 15 օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից.

3) եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, կամ գնումը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների կողմից, կամ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և սույն մասի 2-րդ կետով նախատեսված ժամկետի կիրառումը անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից:

Կարգի 23-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս, օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի, պետք է հաշվի առնել, որ ծրագրային ապահովման, ներառյալ եթե այդ նպատակով կնքվելիք պայմանագրի գնի հիսուն տոկոսից ավելը վերաբերում է ապարատային ապահովումներին, ինչպես նաև **շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնումը համարվում է խորհրդատվական ծառայություն,** և դրանց ձեռքբերումն իրականացվում է օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում **կարող է չկիրառվել նախաորակավորման ընթացակարգ:**

Կարգի 60-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված **«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում** ...:

Կարգի 68-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ, եթե գնումը կատարվում է՝

1) երկփուլ մրցույթով.

2) փակ նպատակային մրցույթով.

3) փակ պարբերական մրցույթով.

4) պետական գաղտնիք պարունակող գնանշման հարցման ձևով.

5) խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով՝ բաց մրցույթով կամ փակ նպատակային մրցույթով:

Վերոգրյալ նորմերի և դրանցում պարունակող դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով գնում կատարելու դեպքում պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների, որպես խորհրդատվական ծառայության գնման դեպքում նախաորակավորման ընթացակարգ կարող է չկիրառվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված **«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում, ինչպես թելադրված է Կարգի 60-րդ կետով: Ուստի բոլոր մնացած դեպքերում «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշ հրավերով չի կարող սահմանվել, եթե չի կազմակերպվել նախաորակավորման ընթացակարգ:**

Հրավերի 2-րդ կետով՝ մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգով սահմանվել է «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաջարանի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.08.2020թ.-ին հայտարարված «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներից «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում

Հանձնաժողովն արձանագրել է, որ ներառված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես՝ վերջինիս հայտում բացակայել է հրավերի 1-ին մասի 2.3.1-ի կետի 2.3.1.1 ենթակետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող աշխատանքի իրականացմանը ցուցաբերվող մոտեցումների հակիրճ նկարագրությունը, ինչպես նաև «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հիմնական կառավարչական և տեխնիկական մասնագետների որակավորման և փորձի վերաբերյալ (առնվազն երկու հոգի) տեղեկությունները (ռեզյումեները):

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին 26.08.2020թ.-ին ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման հիման վրա, վերջինս սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում՝ 26.08.2020թ.-ին էլ. փոստի միջոցով ներկայացրել է պահանջված փաստաթղթերը, ինչպես նաև տրամադրել է նշված պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների ընթացքը լուսաբանող լուսանկարներ, որոնցում ներառված են նաև ջերմամեկուսացման աշխատանքներ:

Վերոնշյալների հիման վրա՝ «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ն հայտարարվել է «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ՔՀ-ԳՀԽԾՁԲ-20/02» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չէր կարող կիրառվել նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման կանոնները, այն է՝ մասնակցից պահանջել ներկայացնել Կարգի 60-րդ կետով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, առավել ևս պայմանագրեր, պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր /հանձնման-ընդունման ակտ, հանձնման-ընդունման արձանագրություններ, երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրի կողմի գրավոր հավաստում/:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աստիճան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի իրավական ու փաստական հանգամանքերը, ինչպես նաև դրանով արված վերլուծությունները, առարկայազուրկ են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Աստիճան» ՍՊԸ-ի կողմից 01.09.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/95 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**